

# ՆԱՏՕ-Ի 2022 ԹՎԱԿԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Ընդունվել է 2022 թվականի հունիսի 29-ին, ՆԱՏՕ-ի Մադրիդյան գագաթնաժողովում,  
պետությունների ու կառավարությունների ղեկավարների կողմից

## Նախաբան

Մենք՝ ՆԱՏՕ-ի դաշնակից պետությունների և կառավարությունների ղեկավարներս, հավաքվել ենք Մադրիդում, մեր անվտանգության և միջազգային խաղաղության և կայունության համար այս ճգնաժամային ժամանակահատվածում: Այսօր մենք ընդունում ենք նոր ռազմավարական հայեցակարգ, որպեսզի երաշխավորենք Դաշինքի պատրաստությունն ու ռեսուրսների ապահովումն ապագայում:

Ավելի քան յոթանասուն տարի ՆԱՏՕ-ն երաշխավորել է դաշնակից երկրների ազատությունն ու անվտանգությունը: Մեր հաջողությունը մեր զինված ուժերում ներգրավված կանանց և տղամարդկանց ծառայության ու ինքնազոհողության արդյունքն է: Մենք պարտական ենք ու երախտապարտ նրանց և նրանց ընտանիքներին:

Մենք վճռական ենք՝ պաշտպանելու մեր մեկ միլիարդ քաղաքացիներին, մեր տարածքը, երաշխավորել մեր ազատությունն ու ժողովրդավարությունը: Մենք կամրապնդենք մեր միասնությունը, համախմբումն ու համերաշխությունը՝ հենվելով մեր երկրների միջև անդրատլանտյան ամուր կապի և ընդհանուր ժողովրդավարական արժեքների ուժի վրա: Մենք վերահաստատում ենք մեր անխախտ հանձնառությունը Դաշինքին և միմյանց բոլոր սպառնալիքներից պաշտպանելու գործին՝ անկախ նրանից, թե որտեղից են բխում դրանք:

Մենք կշարունակենք աշխատել արդար, ներառական և հարատև խաղաղության ուղղությամբ և մնալ, որպես օրենքի ուժի վրա հիմնված աշխարհակարգի բաստիոն: Մենք կպահպանենք գլոբալ հեռանկարը և սերտորեն կաշխատենք աշխատենք մեր գործընկերների, այլ երկրների և միջազգային կազմակերպությունների հետ, ինչպիսիք են Եվրոպական միությունն ու Միավորված ազգերի կազմակերպությունը՝ միջազգային խաղաղությանը և անվտանգությանը նպաստելու համար:

Մեր աշխարհը վիճելի է և անկանխատեսելի: Ուկրաինայի դեմ Ռուսաստանի Դաշնության ագրեսիվ պատերազմը սասանեց խաղաղությունը և լրջորեն փոխեց մեր անվտանգային միջավայրը: Ռուսաստանի բիրտ և ապօրինի ներխուժումը, միջազգային մարդասիրական իրավունքի բազմաթիվ խախտումները, հրեշավոր հարձակումներն ու վայրագություններն անասելի տառապանք ու ավերածություններ են պատճառել: Ուժեղ, անկախ Ուկրաինան կենսական կարևոր նշանակություն ունի եվրատլանտյան տարածաշրջանի կայունության համար: Մոսկվայի վարքագիծն արտացոլում է իր հարևանների և ավելի լայն

անդրատլանտյան համայնքի դեմ ռուսական ագրեսիվ գործողությունների մոդելը: Մենք նաև բախվում ենք ահաբեկչության մշտական սպառնալիքին՝ իր բոլոր ձևերով և դրսևորումներով: Համատարած անկայունությունը, ուժգնացող ռազմավարական մրցակցությունն ու զարգացող ավտորիտարիզմը ձեռնոց են նետում Դաշինքի շահերին և արժեքներին:

Մեր նոր Ռազմավարական հայեցակարգը վերահաստատում է, որ ՆԱՏՕ-ի առանցքային նպատակը մեր հավաքական պաշտպանության ապահովումն է՝ հիմնված «360 աստիճան» համապարփակ մոտեցման վրա: Այն սահմանում է Դաշինքի երեք հիմնական խնդիր. զսպում և պաշտպանություն, ճգնաժամերի կանխարգելում և կառավարում, հավաքական անվտանգություն: Մենք ընդգծում ենք զսպման և պաշտպանության ոլորտը զգալիորեն ամրապնդելու անհրաժեշտությունը, որը միմյանց պաշտպանելու՝ Հոդված 5-ով սահմանված հանձնառության հիմքն է:

ՆԱՏՕ-ի միջուկային կարողությունների հիմնական նպատակներն են՝ պահպանել խաղաղությունը, կանխարգելել հարկադրանքը և զսպել ագրեսիան: Քանի դեռ գոյություն ունի միջուկային զենք, ՆԱՏՕ-ն կշարունակի մնալ միջուկային դաշինք: ՆԱՏՕ-ի նպատակն է՝ ունենալ ավելի ապահով աշխարհ բոլորի համար. մենք ձգտում ենք ստեղծել անվտանգային համակարգ՝ առանց միջուկային զենքի աշխարհում:

Ռազմավարական հայեցակարգն ընդգծում է, որ մեր ազգային և հավաքական դիմակայունության ապահովումը վճռական նշանակություն ունի բոլոր առանցքային խնդիրների համար և ամրապնդում է մեր երկրները, հասարակություններն ու ընդհանուր արժեքները պաշտպանելու մեր ջանքերը: Այն նաև ընդգծում է տեխնոլոգիական նորարարության ոլորտում ներդրումների համալիր կարևորությունը և կլիմայի փոփոխության, մարդու անվտանգության և «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի ներառումը մեր բոլոր հիմնական նպատակներում:

Մեր տեսլականը հստակ է. մենք ցանկանում ենք ապրել աշխարհում, որտեղ հարգում են ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը, մարդու իրավունքներն ու միջազգային իրավունքը, և որտեղ յուրաքանչյուր երկիր կարող է ընտրել իր ճանապարհը՝ զերծ ագրեսիայից, հարկադրանքից կամ խարխուլումից: Մենք աշխատում ենք բոլոր նրանց հետ, ովքեր աշխատում են նույն նպատակների ուղղությամբ: Որպես դաշնակից-երկրներ՝ միասնական ենք պաշտպանելու մեր ազատությունը և նպաստելու աշխարհում խաղաղության ամրապնդմանը:

## Նպատակ և սկզբունքներ

1. ՆԱՏՕ-ն վճռական է՝ պաշտպանելու դաշնակից-պետությունների ազատությունն ու անվտանգությունը: Դաշինքի առանցքային նպատակը և կարևորագույն պարտականությունն է՝ ապահովել մեր հավաքական պաշտպանությունը բոլոր ուղղություններից եկող բոլոր տեսակի սպառնալիքներից: Մենք պաշտպանական դաշինք ենք:
2. Մեր երկրների միջև անդրատլանտյան կապը մեր անվտանգության պարտադիր պայման է: Մեզ միավորում են ընդհանուր արժեքներ. անձի ազատություն, մարդու իրավունքներ, ժողովրդավարություն և օրենքի գերակայություն: Մենք, ինչպես նախկինում, վճռականորեն հանձնառու ենք Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության և Հյուսիսատլանտյան պայմանագրի նպատակներին ու սկզբունքներին:
3. ՆԱՏՕ-ն եզակի, կարևոր և անփոխարինելի անդրատլանտյան հարթակ է մեր անհատական և հավաքական անվտանգությանն առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ խորհրդակցելու, համակարգելու և քայլեր ձեռնարկելու համար: Մենք կամրապնդենք մեր Դաշինքը, հիմնվելով մեր անտրոհելի անվտանգության, միասնության և միմյանց պաշտպանությանն ուղղված ամուր հանձնառության վրա, որն ամրագրված է Հյուսիսատլանտյան պայմանագրի Յոթերորդ 5-ում: Այդ հանձնառության հենքը մեր զսպելու և պաշտպանելու կարողությունն է:
4. ՆԱՏՕ-ն կշարունակի լուծել երեք առանցքային խնդիր. զսպում և պաշտպանություն, ճգնաժամի կանխարգելում և ճգնաժամային կառավարում, հավաքական անվտանգություն: Սրանք փոխլրացնող են և ապահովում են բոլոր դաշնակից-պետությունների հավաքական պաշտպանությունն ու անվտանգությունը:
5. Մենք կամրապնդենք մեր անհատական և հավաքական դիմակայունությունն ու կապիտանենք տեխնոլոգիական առավելությունը: Այս ջանքերը վճռական նշանակություն ունեն Դաշինքի առանցքային նպատակների իրագործման համար: Մենք կխթանենք արդյունավետ կառավարումն ու մեր բոլոր նպատակներում կներառենք կլիմայի փոփոխությունը, մարդու անվտանգությունը և «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգը: Մենք կշարունակենք նպաստել գենդերային հավասարությանը՝ որպես մեր արժեքների արտացոլում:

## Ռազմավարական իրավիճակ

6. Եվրատլանտյան տարածքը խաղաղ չէ: Ռուսաստանի Դաշնությունը խախտել է այն նորմերն ու սկզբունքները, որոնք նպաստում էին կայուն և կանխատեսելի եվրոպական անվտանգային համակարգին: Մենք չենք կարող բացառել դաշնակից-պետությունների ինքնիշխանության և տարածքային ամբողջականության վրա հարձակման հնարավորությունը: Ռազմավարական մրցակցությունը, համատարած անկայունությունն ու պարբերական ցնցումները բնորոշում են մեր ավելի լայն անվտանգային համակարգը: Սպառնալիքները, որոնց մենք բախվում ենք, գլոբալ են և փոխկապակցված:
7. Ավտորիտար գործիչները մարտահրավեր են նետում մեր շահերին, արժեքներին և ժողովրդավարական կենսակերպին: Նրանք ներդրում են անում կատարելագործված սովորական, միջուկային ու հրթիռային կարողությունների մեջ, ընդ որում գրեթե առանց թափանցիկության և հաշվի չառնելով միջազգային նորմերն ու հանձնառությունները: Ռազմավարական մրցակիցները փորձարկում են մեր դիմակայունությունը, ձգտում են չարաշահել մեր երկրների թափանցիկ գործելակերպը, փոխկապակցվածությունը և թվայնացումը: Նրանք միջամտում են մեր ժողովրդավարական գործընթացներին ու ինստիտուտների աշխատանքին, թիրախավորում մեր քաղաքացիների անվտանգությունը հիբրիդային մարտավարությամբ՝ ինչպես ուղղակիորեն, այնպես էլ միջնորդավորված: Նրանք վնասակար գործողություններ են իրականացնում կիբերտիրույթում և տիեզերքում, նպաստում ապատեղեկատվական արշավներին, իրենց նպատակների համար օգտագործում միգրացիան, շահարկում էներգիայի մատակարարումն ու կիրառում տնտեսական հարկադրանք: Այս դերակատարները նաև առաջատար դեր են խաղում բազմակողմանի նորմերի և ինստիտուտների խաթարման և ավտորիտար կառավարման մոդելների խթանման միտումնավոր ջանքերում:
8. Ռուսաստանի Դաշնությունը ՆԱՏՕ-ի դաշնակից-պետությունների անվտանգության, ինչպես նաև եվրատլանտյան տարածքում խաղաղության և կայունության ամենախոշոր և ուղղակի սպառնալիքն է: Այն ձգտում է ազդեցության գոտիներ ստեղծել և ուղղակի վերահսկողություն սահմանել հարկադրանքի, խարխլման, ագրեսիայի և բռնակցման միջոցով: Ռուսաստանը սովորական, կիբեր և հիբրիդային միջոցներ է կիրառում մեր և մեր գործընկերների դեմ: Հարկադրական ռազմական դիրքորոշումը, հռետորաբանությունը և պատրաստակամությունը՝ ուժ կիրառել սեփական

քաղաքական նպատակները հետապնդելու համար, խաթարում են օրենքի ուժի վրա հիմնված աշխարհակարգը: Ռուսաստանի Դաշնությունն արդիականացնում է իր միջուկային ուժերն ու ընդլայնում երկակի նշանակության նոր ու կործանարար առաքման համակարգերը հարկադրող միջուկային ազդակների միջոցով: Ռուսաստանը նպատակ ունի ապակայունացնել մեր արևելյան և հարավային հարևան-երկրները: Հյուսիսային երկրներում ՆԱՏՕ-ի դաշնակիցների հզորացումը և հյուսիսատլանտյան տարածաշրջանում նավագնացության ազատությունը խաթարելու ներուժը ռազմավարական մարտահրավեր է Դաշինքի համար: Մոսկվայի ռազմական աճը, այդ թվում Բալթիկ, Սև և Միջերկրական ծովերի տարածաշրջանում, Բելառուսի հետ ռազմական ինտեգրացիայի հետ մեկտեղ սպառնալիք է մեր անվտանգությանն ու շահերին:

9. ՆԱՏՕ-ն չի ձգտում առճակատման և որևէ վտանգ չի սպառնում Ռուսաստանի Դաշնությանը: Մենք շարունակելու ենք միասնաբար և ամենայն պատասխանատվությամբ արձագանքել ռուսական սպառնալիքներին և թշնամական գործողություններին: Մենք Էսպես կուժեղացնենք զսպումը և պաշտպանությունը բոլոր դաշնակից-պետությունների համար, կավելացնենք մեր դիմակայունությունը ռուսական հարկադրանքին և կաջակցենք մեր գործընկերներին՝ հակազդելու վնասակար միջամտությանը և ագրեսիային: Հաշվի առնելով թշնամական քաղաքականությունը և գործողությունները՝ մենք չենք կարող Ռուսաստանի Դաշնությունը համարել մեր գործընկեր: Այնուամենայնիվ, ինչպես նախկինում, պատրաստ ենք բաց պահել Մոսկվայի հետ հաղորդակցության ուղիները՝ ռիսկերը կառավարելու և նվազեցնելու, սրացումը կանխելու և թափանցիկությունն ավելացնելու համար: Մենք ձգտում ենք կայունության և կանխատեսելիության եվրատլանտյան տարածաշրջանում, ինչպես նաև ՆԱՏՕ-ի և Ռուսաստանի Դաշնության միջև: Մեր հարաբերություններում ցանկացած փոփոխություն կախված է Ռուսաստանի Դաշնության կողմից ագրեսիվ վարքագծի դադարեցումից և միջազգային իրավունքի լիարժեք պահպանումից:
10. Ահաբեկչությունն իր բոլոր ձևերով և դրսևորումներով ամենաուղղակի անհամաչափ սպառնալիքն է մեր քաղաքացիների անվտանգությանը և միջազգային խաղաղությանն ու բարգավաճմանը: Ահաբեկչական կազմակերպությունները ձգտում են հարձակվել կամ այլ երկրների դրդել հարձակվելու դաշնակից-երկրների վրա: Նրանք ընդլայնել են իրենց ցանցերը, բարելավել կարողություններն ու ներդրում արել նոր տեխնոլոգիաների մեջ՝

մեծացնելու հասանելիությունն ու մահաբերությունը: Ոչ պետական գինված խմբավորումները, այդ թվում և անդրազգային ահաբեկչական ցանցերը և պետական աջակցություն վայելող դերակատարները շարունակում են օգտվել հակամարտությունից և թույլ կառավարումից՝ հավաքագրման, զորահավաքի և սեփական հենադաշտի ընդլայնման նպատակով:

11. Աֆրիկայում և Մերձավոր Արևելքում հակամարտությունները, խոցելիությունն ու անկայունությունն ուղղակիորեն ազդում են մեր և մեր գործընկերների անվտանգության վրա: ՆԱՏՕ-ի հարավային հարևանները, մասնավորապես Միջին Արևելքը, Յուսիսային Աֆրիկան և Սահելի շրջանները բախվում են անվտանգային, ժողովրդագրական, տնտեսական և քաղաքական փոխկապակցված մարտահրավերների: Սրանք սրվում են կլիմայի փոփոխության, անկայուն ինստիտուտների, առողջապահության ոլորտում արտակարգ իրավիճակների և պարենային անվտանգության բացակայության հետևանքով: Այս իրավիճակը պարարտ հող է ստեղծում ոչ պետական գինված խմբավորումների, այդ թվում և ահաբեկչական կազմակերպությունների տարածման համար: Այն նաև ռազմավարական մրցակիցներին թույլ է տալիս իրականացնել ապակայունացմանն ու հարկադրանքին ուղղված միջամտություններ:
12. Համատարած անկայունությունը հանգեցնում է քաղաքացիական անձանց դեմ բռնության, սեռական բռնության հակամարտության պայմաններում, ինչպես նաև հարձակումների մշակութային արժեքների վրա և շրջակա միջավայրին վնասելուն: Այն հանգեցնում է բնակչության բռնի տեղահանմանը՝ խթանելով մարդկանց թրաֆիքինգն ու անօրինական գաղթը: Այս միտումները ստեղծում են լուրջ անդրազգային և հումանիտար մարտահրավերներ: Դրանք խաթարում են մարդու և պետության անվտանգությունը և անհամաչափ ներգործություն ունեն կանանց, երեխաների և փոքրամասնությունների վրա:
13. Չինաստանի ժողովրդական Հանրապետության հռչակած նպատակներն ու հարկադրանքի քաղաքականությունը մարտահրավեր է մեր շահերի, անվտանգության և արժեքների համար: ՉԺՀ-ն կիրառում է քաղաքական, տնտեսական և ռազմական գործիքների լայն շրջանակ՝ իր գլոբալ ներկայությունն ընդլայնելու և հզորությունը տարածելու համար՝ միևնույն ժամանակ թաքցնելով իր ռազմավարությունը, մտադրությունները և ռազմական աճը: ՉԺՀ-ի վնասակար կիբեր և հիբրիդային գործողությունները, ինչպես նաև առճակատման հռետորաբանությունն ու ապատեղեկատվությունն ուղղված են ՆԱՏՕ-ի դաշնակից-երկրների դեմ և վնասում են Դաշինքի անվտանգությունը:

ՉԺՅ-ն ձգտում է վերահսկել առանցքային տեխնոլոգիական և արդյունաբերական ոլորտները, հույժ կարևոր ենթակառուցվածքները, ռազմավարական նշանակության ապրանքներն ու մատակարարման շղթաները: Օգտագործում է իր տնտեսական լծակները՝ ռազմավարական կախվածությունն ստեղծելու և դրա ազդեցությունը մեծացնելու համար: Ձգտում է խաթարել օրենքի ուժի վրա հիմնված աշխարհակարգը, ներառյալ տիեզերական, կիբեր և ծովային տիրույթներում: Չինաստանի ժողովրդական Յանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև գործընկերության խորացումը և օրենքի ուժի վրա հիմնված աշխարհակարգը խաթարելու նրանց փոխլրացնող փորձերը հակասում են մեր արժեքներին ու շահերին:

14. Մենք, ինչպես նախկինում, բաց ենք ՉԺՅ-ի հետ կառուցողական փոխհամագործակցության համար, ներառյալ փոխադարձ թափանցիկության՝ Դաշինքի անվտանգության շահերի պաշտպանության նպատակով: Մենք՝ դաշնակիցներս, ամենայն պատասխանատվությամբ կաշխատենք միասին հակազդելու ՉԺՅ-ի կողմից եվրատլանտյան անվտանգությանն ուղղված համակարգային մարտահրավերներին և ապահովելու դաշնակից-պետությունների պաշտպանությունն ու անվտանգությունը երաշխավորելու ՆԱՏՕ-ի հաստատուն կարողությունը: Մենք կբարձրացնենք ընդհանուր իրազեկվածության մակարդակը, կամրապնդենք մեր դիմակայունությունն ու պատրաստվածությունը, կպաշտպանվենք ՉԺՅ-ի կիրառած հարկադրանքի մարտավարությունից Դաշինքը պառակտելու փորձերից: Կպաշտպանենք մեր ընդհանուր արժեքներն ու օրենքի ուժի վրա հիմնված աշխարհակարգը, այդ թվում և նավագնացության ազատությունը:
15. Կիրքերտարածությունը մշտապես վիճարկվում է: Չարամիտ դերակատարները ձգտում են քայքայել մեր խիստ կարևոր ենթակառուցվածքները, միջամտել պետական ծառայություններին, ստանալ հետախուզական տվյալներ, գողանալ մտավոր սեփականությունն ու խոչընդոտել մեր ռազմական գործունեությունը:
16. Ռազմավարական մրցակիցներն ու հավանական հակառակորդները ներդրում են անում տեխնոլոգիաներում, որոնք կարող են սահմանափակել մեր մուտքն ու գործողությունների ազատությունը տիեզերքում, թուլացնել մեր տիեզերական կարողությունները, թիրախավորել մեր քաղաքացիական և ռազմական ենթակառուցվածքները, խաթարել մեր պաշտպանությունն ու վնաս հասցնել մեր անվտանգությանը:
17. Նոր և քայքայիչ տեխնոլոգիաները ստեղծում են թե՛ հնարավորություններ, թե՛ ռիսկեր: Դրանք փոխում են հակամարտությունների բնույթը, ձեռք են բերում



ավելի մեծ ռազմավարական նշանակություն և դառնում համաշխարհային մրցակցության առանցքային ուղորտներ: Տեխնոլոգիական գերազանցությունն ավելի ու ավելի շատ է ազդում մարտադաշտում հաջողությունների վրա:

18. Սպառազինությունների վերահսկման, գինաթափման և չտարածման ճարտարապետության քայքայումը բացասաբար է ազդել ռազմավարական կայունության վրա: Ռուսաստանի Դաշնության կողմից սպառազինությունների վերահսկման պարտավորությունների և հանձնառությունների խախտումներն ու ընտրողական կատարումը հանգեցրել են ավելի լայն անվտանգային համակարգի վատթարացմանը: Թշնամական պետությունների և ոչ պետական գործող անձանց կողմից ՆԱՏՕ-ի դեմ քիմիական, կենսաբանական, ճառագայթային և միջուկային նյութերի կամ զենքի հավանական կիրառումը շարունակում է մնալ մեր անվտանգության սպառնալիք: Իրանը և Հյուսիսային Կորեան շարունակում են զարգացնել իրենց միջուկային և հրթիռային ծրագրերը: Սիրիան, Հյուսիսային Կորեան և Ռուսաստանի Դաշնությունը, ոչ պետական դերակատարների հետ համատեղ, դիմել են քիմիական զենքի կիրառմանը: ՉԺՀ-ն արագորեն ընդլայնում է իր միջուկային գինանոցն ու մշակում մատակարարման ավելի կատարելագործված առաքման համակարգեր՝ առանց թափանցիկության, առանց սպառազինությունների վերահսկողության կամ ռիսկերի նվազեցման գործառույթների բարեխիղճ իրականացման:

19. Կլիմայի փոփոխությունը մեր ժամանակի որոշիչ մարտահրավեր է, որը խոր ազդեցություն է թողնում դաշնակից-պետությունների անվտանգության վրա: Այն բազմապատկում է ճգնաժամերն ու սպառնալիքները: Այն կարող է սաստկացնել հակամարտությունը, անկայունությունն ու աշխարհաքաղաքական մրցակցությունը: Ջերմաստիճանի բարձրացումը հանգեցնում է ծովի մակարդակի բարձրացման, անտառային հրդեհների և ավելի հաճախակի ու ծայրահեղ եղանակային երևույթների, որոնք խանգարում են մեր հասարակությունների բնականոն գործունեությունը, խաթարում մեր անվտանգությունն ու սպառնում մեր քաղաքացիների կյանքին ու կենսապայմաններին: Կլիմայի փոփոխությունն ազդում է նաև մեր զինված ուժերի գործունեության վրա: Մեր ենթակառուցվածքը, ունեցվածքն ու բազաները խոցելի են դրա ազդեցության նկատմամբ: Մեր ուժերը պետք է գործեն ավելի ծայրահեղ կլիմայական պայմաններում, իսկ մեր զինծառայողներին ավելի ու ավելի հաճախ են օգնության կանչում տարերային աղետների հետևանքները չեզոքացնելու:

## ՆԱՏՕ-ի հիմնական խնդիրները

### Չսպում և պաշտպանություն

20. Թեև ՆԱՏՕ-ն պաշտպանական դաշինք է, Դաշինքի յուրաքանչյուր սանտիմետրը պաշտպանելու, բոլոր դաշնակից-պետությունների ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը պահպանելու և ցանկացած ագրեսորի նկատմամբ գերիշխանություն հաստատելու մեր ուժը և վճռականությունը կասկածից վեր են: Ռազմավարական մրցակցության պայմաններում մենք կբարձրացնենք գլոբալ իրազեկվածությունն ու հասանելիությունը՝ բոլոր տիրույթներում և բոլոր ուղղություններով՝ զսպելու, պաշտպանելու, հակազդելու և արգելելու նպատակով՝ մեր «360 աստիճան» մոտեցման համաձայն: ՆԱՏՕ-ի զսպման և պաշտպանության դիրքորոշումը հիմնված է միջուկային, սովորական և հրթիռային պաշտպանության համադրության վրա՝ համալրված տիեզերական և կիբեր կարողություններով: Այդ պաշտպանական է, համաչափ և լիովին համապատասխանում է մեր միջազգային հանձնառություններին: Մենք համաչափորեն, հետևողականորեն և ինտեգրված կկիրառենք ռազմական և ոչ ռազմական գործիքակազմ, որը կարձագանքի մեր անվտանգության բոլոր սպառնալիքներին՝ մեր նախընտրած եղանակով, ժամանակահատվածում և ոլորտներում:

21. Մենք զգալիորեն կամրապնդենք զսպման և պաշտպանության դիրքորոշումը՝ ցանկացած հավանական հակառակորդի կողմից ագրեսիայի ցանկացած հնարավորություն կանխելու համար: Այդ նպատակով էական և մշտական ներկայություն կապահովենք ցամաքում, ծովում և օդում՝ այդ թվում ամրապնդելով համատեղ հակաօդային և հակահրթիռային պաշտպանությունը: Մենք կիրականացնենք զսպում և պաշտպանություն՝ տեղերում հուսալի, բազմաֆունկցիոնալ, մարտունակ ուժերի, կատարելագործված հրամանատարական և վերահսկիչ մեխանիզմների, նախապես պատրաստի զինամթերքի և տեխնիկայի, ինչպես նաև բարելավված կարողությունների և ենթակառուցվածքների միջոցով, որոնց նպատակն է՝ արագ աջակցություն ցուցաբերել ցանկացած դաշնակից-պետությանը, այդ թվում կարճ ժամանակահատվածում կամ առանց ծանուցման: Մենք կվերականգնենք մշտական տեղակայման ուժերի և օժանդակ ուժերի հավասարակշռությունը՝ զսպման և Դաշինքի պաշտպանունակության մեխանիզմները հզորացնելու նպատակով: Կապահովենք զսպման և պաշտպանության դիրքորոշման

վատահեղիությունը, ճկունությունը, հարմարվողականությունն ու կայունությունը՝ մեր առջև ծառայած սպառնալիքներին համաչափ:

22. Կշարունակենք բարձրացնել մեր ուժերի հավաքական պատրաստվածության, արագ արձագանքման, զորքերի ծավալման, համախմբման և փոխգործունակության մակարդակը: Անհատապես և հավաքական առումով կտրամադրենք ուժերի, կարողությունների, ծրագրերի, ռեսուրսների, ունեցվածքի և ենթակառուցվածքների ամբողջական շրջանակը, որն անհրաժեշտ է զսպման և պաշտպանության, ինչպես նաև բազմաֆունկցիոնալ միջուկային զենք ունեցող հակառակորդների դեմ բարձր ինտենսիվության ռազմական գործողություններ վարելու համար: Կապահովենք ռազմական կառավարման հուսալի, դիմակայուն և միասնական կառուցվածք, կբարձրացնենք ազգային և ՆԱՏՕ-ի պաշտպանական ծրագրերի ներդաշնակությունը, կամրապնդենք և կարդիականացնենք ՆԱՏՕ-ի զինված ուժերի կառուցվածքը: Կուժեղացնենք մարզումն ու վերապատրաստումը, կհարմարեցնենք և կօպտիմալացնենք որոշումների կայացման գործընթացները, կբարելավենք մեր նախագծերն ու կավելացնենք ճգնաժամային իրավիճակների արձագանքման համակարգերի արդյունավետությունը:

23. Ծովում անվտանգությունը կարևոր է մեր խաղաղության և բարգավաճման համար: Մենք կամրապնդենք մեր դիրքորոշումն ու իրավիճակային իրազեկվածությունը՝ ծովում բոլոր սպառնալիքները զսպելու և դրանցից պաշտպանվելու, նավագնացության ազատությունը երաշխավորելու, ծովային առևտրային ուղիների անվտանգությունն ապահովելու և հաղորդակցության հիմնական ուղիները պաշտպանելու համար:

24. Կարագացնենք թվային ոլորտի փոխակերպումները, ՆԱՏՕ-ի հրամանատարական կառուցվածքը կհարմարեցնենք տեղեկատվական դարաշրջանին և կամրապնդենք մեր կիբերանվտանգությունը, ցանցերն ու ենթակառուցվածքները: Կխթանենք նորարարությունը և կավելացնենք ներդրումները նոր և կործանիչ տեխնոլոգիաների մեջ՝ փոխգործունակությունն ու ռազմական գերազանցությունը պահպանելու համար: Համատեղ կաշխատենք նոր տեխնոլոգիաներ ներդնելու և ինտեգրելու ուղղությամբ, կհամագործակցենք մասնավոր ոլորտի հետ, կպաշտպանենք մեր նորարարական Էկոհամակարգերը, կսահմանենք չափանիշներ և կպահպանենք պատասխանատու օգտագործման սկզբունքները, որոնք արտացոլում են մեր ժողովրդավարական արժեքներն ու մարդու իրավունքները:

25. Տիեզերական տարածքի և կիբերտարածության անվտանգ օգտագործումն ու անարգել մուտքի ապահովումն արդյունավետ զսպման և պաշտպանության բանալին է: Մենք կմեծացնենք տիեզերքում և կիբերտիրույթում արդյունավետ գործելու մեր կարողությունը՝ բոլոր սպառնալիքներն առկա ամբողջ գործիքակազմով կանխարգելելու, հայտնաբերելու, դրանց հակազդելու և արձագանքելու համար: Կիբերտարածությունում առանձին կամ միասնական վնասակար գործողությունները կամ թշնամական գործողությունները դեպի տիեզերք, տիեզերքից կամ տիեզերքի ներսում, կարող են հասնել զինված հարձակման մակարդակի և դրդել Յուսիսատլանտյան խորհրդին դիմելու Յուսիսատլանտյան պայմանագրի Յոթերորդ 5-ին: Մենք ընդունում ենք միջազգային իրավունքի կիրառումը և կնպաստենք պատասխանատու վարքագծին կիբերտարածությունում և տիեզերքում: Նաև կմեծացնենք տիեզերական և կիբեր կարողությունների դիմակայունությունը, որից կախված է մեր հավաքական պաշտպանությունն ու անվտանգությունը:
26. Մենք ավելի վճռական, միասնական և համաձայնեցված մոտեցում կկիրառենք դաշնակից-պետությունների և Դաշինքի մակարդակով մեր անվտանգության ռազմական և ոչ ռազմական սպառնալիքներին ու մարտահրավերներին հակազդելու դիմակայունություն ձևավորելու ուղղությամբ, որը որպես ազգային հանձնառության և հավաքական պարտավորություն ամրագրված է Յուսիսատլանտյան պայմանագրի Յոթերորդ 3-ում: Կաշխատենք ռազմավարական խոցելի կետերն ու կախվածությունները վեր հանելու և մեղմացնելու ուղղությամբ, որոնք առնչվում են մեր կենսական կարևոր ենթակառուցվածքներին, մատակարարումների շղթային և առողջապահական համակարգին: Կամրապնդենք մեր Էներգետիկ անվտանգությունը և ներդրումներ կանենք կայուն և հուսալի Էներգամատակարարումների, մատակարարների և աղբյուրների ապահովման ոլորտում: Կերաշխավորենք քաղաքացիական պատրաստվածությունը՝ պետական կառավարման մարմինների գործունեության շարունակականություն, բնակչությանը հիմնական ծառայությունների մատուցում և զինված ուժերին քաղաքացիական աջակցություն ապահովելու համար: Կավելացնենք մեր ներուժը ռազմավարական ցնցումներին ու խափանումներին նախապատրաստվելու, դրանց հակազդելու, արձագանքելու և դրանցից արագ վերականգնվելու համար, կապահովենք Դաշինքի գործունեության շարունակականությունը:
27. Ներդրում կանենք պետությունների և ոչ պետական սուբյեկտների կողմից քաղաքական, տնտեսական, Էներգետիկ, տեղեկատվական և այլ հիբրիդային

մարտավարությունների հարկադիր կիրառմանը նախապատրաստվելու, դրանք զսպելու և դրանցից պաշտպանելու մեր կարողությունների մեջ: Դաշնակից-պետությունների դեմ հիբրիդային գործողությունները կարող են հասնել զինված հարձակման մակարդակի և հանգեցնել նրան, որ Յուլսիսատլանտյան խորհուրդը դիմի Յուլսիսատլանտյան պայմանագրի Յոդված 5-ին: Կշարունակենք աջակցել մեր գործընկերներին՝ հակազդելու հիբրիդային մարտահրավերներին և ձգտելու առավելագույն փոխհամագործակցության այլ համապատասխան սուբյեկտների հետ, ինչպիսին է, օրինակ, Եվրոպական միությունը:

28. ՆԱՏՕ-ի միջուկային ներուժի հիմնարար նպատակն է՝ պահպանել խաղաղությունը, կանխել հարկադրանքն ու զսպել ագրեսիան: Միջուկային զենքն իր տեսակի մեջ բացառիկ է: Հանգամանքները, որոնց դեպքում ՆԱՏՕ-ն ստիպված կլինի միջուկային զենք կիրառել, խիստ անհավանական են: Միջուկային զենքի ցանկացած կիրառում հիմնովին կփոխի հակամարտության բնույթը: Դաշինքն ունի կարողություն և վճռականություն՝ հակառակորդին պարտադրելու այնպիսի կորուստներ, որոնք անընդունելի կլինեն և զգալիորեն կզերազանցեն այն օգուտները, որոնց ցանկացած հակառակորդ հույս ունի քաղել:
29. Դաշինքի ռազմավարական միջուկային ուժերը, մասնավորապես Միացյալ Նահանգների ուժերը, Դաշինքի անվտանգության գերագույն երաշխիքն են: Միացյալ Թագավորության և Ֆրանսիայի անկախ ռազմավարական միջուկային ուժերը զսպող դեր ունեն իրենց և նշանակալի ներդրում՝ Դաշինքի ընդհանուր անվտանգության մեջ: Դաշինքի այս երկրների որոշում կայացնող առանձին կենտրոնները նպաստում են զսպմանը՝ բարդացնելով հավանական հակառակորդների հաշվարկները: ՆԱՏՕ-ի միջուկային զսպման դիրքորոշումը նաև հիմնված է Եվրոպայում տեղակայված ԱՄՆ-ի միջուկային զենքի և համապատասխան դաշնակից-պետությունների ներդրումների վրա: ՆԱՏՕ-ի միջուկային զսպման առաքելության առանցքը շարունակում են մնալ դաշնակից-պետությունների տրամադրած երկակի նշանակության ավիակիրները:
30. ՆԱՏՕ-ն կձեռնարկի բոլոր անհրաժեշտ քայլերը՝ միջուկային զսպման առաքելության հուսալիությունը, արդյունավետությունը, ապահովությունն ու անվտանգությունը երաշխավորելու համար: Դաշինքը հավատարիմ է բոլոր ոլորտներում և հակամարտությունների ամբողջ շրջանակով ավելի մեծ համախմբում և համաձայնեցված ուժեր և գործողություններ ապահովելու իր հանձնառությանը՝ մինևույն ժամանակ կատարելով միջուկային զսպման

բացառիկ և հստակ դեր: ՆԱՏՕ-ն կշարունակի նպաստել վստահելի զսպման մեխանիզմներին, ամրապնդել իր ռազմավարական հաղորդակցությունը, ավելացնել վարժանքների արդյունավետությունն ու կրճատել ռազմավարական ռիսկերը:

31. Մենք կշարունակենք ներդրումներ անել քիմիական, կենսաբանական, ճառագայթային և միջուկային սպառնալիքներից պաշտպանության ոլորտում: Կկատարելագործենք մեր քաղաքականությունը, ծրագրերը, վարժանքներն ու մարզումները և կգնահատենք, թե որքանով ենք կարողանում այս պահանջները ներառել զսպման և պաշտպանության մեր դիրքորոշման շրջանակում:
32. Ռազմավարական կայունությունը, որն ապահովվում է արդյունավետ զսպման և պաշտպանության, սպառազինությունների վերահսկման ու զինաթափման և կառուցողական ու փոխադարձ քաղաքական երկխոսության միջոցով, շարունակում է կարևոր դեր խաղալ մեր անվտանգության գործում: Սպառազինությունների վերահսկումը, զինաթափումն ու չտարածումը Դաշինքի նպատակներին հասնելու կարևոր պայման են: Սպառազինությունների վերահսկման, զինաթափման և զենքի չտարածման ուղղությամբ անդամ-պետությունների ջանքերն ուղղված են ռիսկերի նվազեցմանը, անվտանգությանը, թափանցիկությանը, ստուգմանը և համապատասխանությանը: Մենք կձգտենք ներառել ռազմավարական ռիսկերի նվազեցման բոլոր բաղադրիչները, այդ թվում երկխոսության միջոցով խթանել վստահությունը և կանխատեսելիությունը, ավելացնել փոխըմբռնումը, ներդնել ճգնաժամերի կարգավորման և կանխարգելման արդյունավետ գործիքներ: Այս ջանքերը հաշվի կառնեն ստեղծված անվտանգային իրադրությունն ու բոլոր դաշնակից-պետությունների անվտանգությունը և կլրացնեն զսպելու և պաշտպանելու Դաշինքի դիրքորոշումը: Կկիրառենք ՆԱՏՕ-ն՝ որպես սպառազինությունների վերահսկման վերաբերյալ համապարփակ քննարկումների և սերտ խորհրդակցությունների հարթակ:
33. Միջուկային զենքի չտարածման պայմանագիրը լուրջ բաստիոն է միջուկային զենքի տարածման դեմ, և մենք, ինչպես նախկինում, հավատարիմ ենք դրա լիարժեք իրագործմանը, ներառյալ Յոթրված 4-ը: ՆԱՏՕ-ի նպատակն է՝ աշխարհի համար ստեղծել անվտանգային իրավիճակ առանց միջուկային զենքի՝ Միջուկային զենքի չտարածման մասին պայմանագրի կետերի համաձայն:
34. Ահաբեկչության դեմ պայքարն էական նշանակություն ունի մեր հավաքական պաշտպանության համար: ՆԱՏՕ-ի դերն ահաբեկչության դեմ պայքարում նպաստում է բոլոր երեք առանցքային նպատակների իրականացմանը և

Դաշինքի զսպման և պաշտպանության «360 աստիճանի» մոտեցման անբաժանելի մասն է: Ահաբեկչական կազմակերպությունները սպառնում են մեր բնակչությանը, ուժերին և տարածքին: Մենք կշարունակենք հակազդել, զսպել, պաշտպանել, կանխարգելել ահաբեկչական խմբավորումներից բխող վտանգները և մարտահրավերները՝ զսպման, պաշտպանության և արգելակման միջոցների հետ համատեղ: Կամրապնդենք համագործակցությունը միջազգային հանրության, ներառյալ Միավորված ազգերի կազմակերպության և Եվրոպական միության հետ՝ ահաբեկչության տարածմանը նպաստող հանգամանքները վերացնելու ուղղությամբ:

## **Ճգնաժամերի կանխարգելում և կառավարում**

35. ՆԱՏՕ-ի դաշնակից-պետությունները շահագրգռված են ՆԱՏՕ-ի միջոցով նպաստել կայունությանը ու և կարգավորել հակամարտությունները: Մենք կշարունակենք աշխատել Դաշինքի անվտանգության վրա ազդելու ներուժ ունեցող ճգնաժամերը կանխելու և դրանց արձագանքելու ուղղությամբ: Մենք կհենվենք բացառիկ կարողությունների և փորձի վրա, որը ձեռք ենք բերել ճգնաժամային կառավարման ոլորտում: Այդ նպատակով կանոնավոր գորավարժությունների միջոցով առանձնահատուկ ուշադրություն կդարձնենք ճգնաժամերի արձագանքմանը, պատրաստվածությանն ու կառավարմանը, կօգտագործենք մեր կարողությունները՝ ճգնաժամերի արձագանքմանն ուղղված բազմազգ գործողությունների համակարգման, անցկացման, ապահովման և աջակցման համար:

36. Մենք կտրամադրենք ռեսուրսներ, ներուժ, ուսուցում և ղեկավարման ու վերահսկման մեխանիզմներ՝ ճգնաժամային կառավարմանը, կայունացմանն ու ահաբեկչության դեմ պայքարին ուղղված ռազմական և քաղաքացիական գործողությունների ծավալման և աջակցման համար, այդ թվում և ռազմավարական հեռավորության վրա: Վերջին երեք տասնամյակում քաղած դասերի, այդ թվում Աֆղանստանում մեր գործողությունների հիման վրա կշարունակենք բարելավել մեր պատրաստվածությունը, ավելացնել ռազմական և քաղաքացիական կարողությունը և քաղաքացիական-ռազմական պլանավորումն ու համակարգումը: Մենք կշարունակենք առաջիկայում զարգացնել քաղաքացիական ճգնաժամային կառավարումը և օգնության տրամադրումը, կլիմայի փոփոխությունների, պարենային անվտանգության բացակայության և առողջապահության ոլորտում արտակարգ իրավիճակների

հետևանքների արձագանքումը՝ հանուն Դաշինքի անվտանգության: Սա մեզ թույլ կտա արագ արձագանքել ցանկացած անկանխատեսելի հանգամանքի:

37. Գործընկերներն իրենց կարևոր ներդրումն են բերում ՆԱՏՕ-ի առաջնորդած ճգնաժամային կառավարմանը: Մենք կշարունակենք ապահովել կայուն քաղաքական և օպերատիվ ռազմական փոխգործունակությունը գործընկերների հետ, որոնք հետաքրքրություն են ցուցաբերում մեր առաքելությունների և գործողությունների նկատմամբ:
38. Մենք կավելացնենք ճգնաժամերի և հակամարտությունների կանխատեսելու և կանխելու ջանքերը: Կանխարգելումը կայունությանն ու Յուլիսատլանտյան դաշինքի անվտանգությանը նպաստելու կայուն միջոց է: Մենք կմեծացնենք մեր գործընկերներին տրամադրվող աջակցությունը, ինչպես նաև կօգնենք նրանց մեծացնել իրենց կարողունակությունն ահաբեկչության դեմ պայքարելու և անվտանգության ընդհանուր մարտահրավերները հաղթահարելու: Մենք կընդլայնենք անվտանգության և կարողությունների զարգացմանն ուղղված աջակցության ծավալն ու շրջանակը, որը տրամադրում ենք մեր հարևանության և հարևանությունից դուրս գործընկերներին՝ նրանց պատրաստվածությունն ու դիմակայունությունը մեծացնելու, վնասակար միջամտություններին հակազդելու, ապակայունությունը կանխարգելելու և ագրեսիային հակազդելու կարողությունները զարգացնելու նպատակով:
39. Մարդու անվտանգությունը, ներառյալ քաղաքացիական բնակչության պաշտպանությունն ու քաղաքացիական անձանց հասցվող վնասի մեղմումը կենտրոնական տեղ է զբաղեցնում ճգնաժամերի կանխարգելման և ճգնաժամային կառավարման մեր մոտեցման մեջ: Մենք կաշխատենք այլ միջազգային դերակատարների հետ՝ ճգնաժամերին ու համատարած անկայունությանը նպաստող պայմանների լայն շրջանակի չեզոքացման ուղղությամբ, և կխթանենք կայունությունն ու վերականգնումը: Մենք կամրապնդենք համակարգումն ու համագործակցությունը Միավորված ազգերի կազմակերպության և Եվրոպական Միության, ինչպես նաև այլ տարածաշրջանային կազմակերպությունների հետ, ինչպիսիք են Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունն ու Աֆրիկյան միությունը:



## Համատեղ անվտանգություն

40. ՆԱՏՕ-ի ընդլայնումը պատմական հաջողություն է: Այն ամրապնդել է մեր Դաշինքը, երաշխավորել եվրոպայի միլիոնավոր քաղաքացիների անվտանգությունը և նպաստել եվրատլանտյան տարածաշրջանի խաղաղությանն ու կայունությանը: Մենք վերահաստատում ենք Բաց դռների քաղաքականությունը, համաձայն Յուլսիսատլանտյան պայմանագրի Հոդված 10-ի, որպես մեր հիմնարար արժեքների և եվրատլանտյան տարածաշրջանում խաղաղության և կայունության հարցում մեր ռազմավարական շահերի արտահայտություն: Մեր դռները շարունակում են բաց մնալ բոլոր եվրոպական ժողովրդավարական երկրների առաջ, որոնք կիսում են Դաշինքի արժեքները, պատրաստ են և ի գործ են իրենց վրա վերցնել անդամակցության հետ կապված պատասխանատվությունն ու պարտավորությունները, և որոնց անդամակցությունը նպաստում է մեր ընդհանուր անվտանգությանը: Անդամակցության մասին որոշումները կայացնում են ՆԱՏՕ-ի երկրները՝ առանց այդ գործընթացում երրորդ կողմի ներգրավման:
41. Դաշնակից դառնալ ձգտող երկրների անվտանգությունը սերտորեն կապված է մեր անվտանգության հետ: Մենք վճռականորեն պաշտպանում ենք նրանց անկախությունը, ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը: Մենք կամրապնդենք քաղաքական երկխոսությունն ու համագործակցությունը նրանց հետ, ովքեր ձգտում են միանալ Դաշինքին, կօգնենք նրանց ուժեղացնել դիմակայունությունը վնասակար միջամտությանը, ամրապնդել նրանց կարողություններն ու բարձրացնել մեր գործնական աջակցությունը նրանց եվրատլանտյան ձգտումների առաջնորդմանը: Մենք կշարունակենք զարգացնել գործընկերությունը Բոսնիայի ու Հերցեգովինայի, Վրաստանի և Ուկրաինայի հետ՝ եվրատլանտյան տարածաշրջանում խաղաղության, կայունության և անվտանգության մեր ընդհանուր շահերի առաջխաղացման համար: Մենք վերահաստատում ենք 2008 թվականին Բուխարեստի գագաթնաժողովում ընդունած որոշումը և հետագա բոլոր որոշումները, որոնք վերաբերում են Վրաստանին և Ուկրաինային:
42. Քաղաքական երկխոսությունն ու գործնական համատեղ աշխատանքը գործընկերների հետ, հիմնված փոխադարձ հարգանքի և շահի վրա, նպաստում են կայունությանը մեր սահմաններից դուրս, ամրապնդում անվտանգությունը տանը և աջակցում ՆԱՏՕ-ի առանցքային առաքելությանը: Գործընկերային հարաբերությունները վճռական նշանակություն ունեն ընդհանուր

ձեռքբերումները պաշտպանելու, մեր դիմակայունությունը բարձրացնելու և օրենքի ուժի վրա հիմնված աշխարհակարգը պահպանելու գործում:

43. Եվրոպական միությունը ՆԱՏՕ-ի բացառիկ և հիմնական գործընկերն է: ՆԱՏՕ-ի դաշնակից-երկրներն ու ԵՄ անդամները կիսում են նույն արժեքները: ՆԱՏՕ-ն և ԵՄ-ն փոխլրացնող, համահունչ և փոխադարձաբար միմյանց ամրապնդող դեր են խաղում միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման գործում: Մեր երկարամյա համագործակցության հիման վրա կամրապնդենք ՆԱՏՕ-ԵՄ ռազմավարական գործընկերությունը, կխթանենք քաղաքական խորհրդակցություններն ու կընդլայնենք համագործակցությունն ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ, ինչպիսիք են ռազմական շարժը, դիմակայունությունը, կլիմայի փոփոխության ազդեցությունն անվտանգության վրա, նոր և քայքայիչ տեխնոլոգիաները, մարդու անվտանգությունը, «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգը, ինչպես նաև հակազդումը կիբեր և հիբրիդային սպառնալիքներին և արձագանքումը ՉԺՀ-ի կողմից եվրատլանտյան անվտանգությանն առաջադրված համակարգային մարտահրավերներին: ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի միջև ռազմավարական գործընկերության զարգացման համար անհրաժեշտ է ԵՄ դաշնակից չհանդիսացող երկրների լիարժեք մասնակցությունը ԵՄ պաշտպանության ջանքերին: ՆԱՏՕ-ն ընդունում է ավելի ուժեղ և ունակ եվրոպական պաշտպանության արժեքը, որը դրական ազդեցություն ունի անդրատլանտյան և գլոբալ անվտանգության վրա, լրացնում է ՆԱՏՕ-ն և օպերատիվ կերպով փոխգործակցում է կազմակերպության հետ: Պաշտպանական ծախսերն ավելացնելու և համահունչ, փոխադարձաբար միմյանց ամրապնդող ուժերի զարգացմանն ուղղված նախաձեռնությունները, միաժամանակ խուսափելով անհարկի կրկնօրինակումից, առանցքային նշանակություն ունեն եվրատլանտյան տարածաշրջանի անվտանգության բարձրացմանն ուղղված մեր համատեղ ջանքերի համար:

44. Մենք կամրապնդենք կապերը գործընկերների հետ, որոնք կիսում են Դաշինքի արժեքներն ու շահագրգռված են օրենքի ուժի վրա հիմնված աշխարհակարգի պահպանմամբ: Մենք կամրապնդենք երկխոսությունն ու համագործակցությունը, որպեսզի պաշտպանենք այդ կարգը, հավատարիմ մնանք մեր արժեքներին և պահպանենք այն համակարգերը, ստանդարտներն ու տեխնոլոգիաները, որոնցից դրանք կախված են: Մենք կընդլայնենք շփումներն ավելի լայն հարևանության և ամբողջ աշխարհի երկրների հետ և բաց կլինենք ցանկացած երկրի կամ կազմակերպության հետ փոխգործակցության


համար, եթե դա կամրապնդի մեր փոխադարձ անվտանգությունը: Մեր մոտեցումը կշարունակի մնալ շահերի վրա հիմնված, լինել ճկուն, կենտրոնանալ ընդհանուր սպառնալիքների և մարտահրավերների արձագանքման վրա և հարմարվել փոփոխվող աշխարհաքաղաքական իրողություններին:

45. Արևմտյան Բալկանները և Սևծովյան տարածաշրջանը կարևոր ռազմավարական նշանակություն ունեն Դաշինքի համար: Մենք կշարունակենք աջակցել այս տարածաշրջանների շահագրգիռ երկրների եվրատլանտյան ձգտումներին: Մենք կակտիվացնենք ջանքերը, որպեսզի ամրապնդենք տարբեր սպառնալիքների ու մարտահրավերների արձագանքելու նրանց կարողությունները, կուժեղացնենք երրորդ երկրի կողմից վնասակար միջամտության և հարկադրանքի դիմակայունությունը: Մենք կաշխատենք գործընկերների հետ անվտանգության ընդհանուր սպառնալիքների ու մարտահրավերների վերացման ուղղությամբ այնպիսի տարածաշրջաններում, որոնք ռազմավարական հետաքրքրություն են ներկայացնում Դաշինքի համար, ներառյալ Մերձավոր Արևելքը և Յուսիսային Աֆրիկան, ինչպես նաև Սահելի տարածաշրջանը: Յնդկա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը կարևոր է ՆԱՏՕ-ի համար՝ նկատի առնելով այն, որ այդ տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումները կարող են ուղղակիորեն ազդել եվրատլանտյան անվտանգության վրա: Մենք կամրապնդենք երկխոսությունն ու համագործակցությունը նոր և հին գործընկերների հետ Յնդկա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում՝ միջտարածաշրջանային մարտահրավերները լուծելու և անվտանգության ոլորտում ընդհանուր շահերը պաշտպանելու համար:

46. ՆԱՏՕ-ն պետք է դառնա առաջատար միջազգային կազմակերպությունն անվտանգության վրա կլիմայի փոփոխության ազդեցությունը ընկալելու և դրան հարմարվելու հարցերում: Յուսիսատլանտյան դաշինքը կղեկավարի պաշտպանության և անվտանգության վրա կլիմայի փոփոխության ազդեցության գնահատումն ու դրա հետ կապված մարտահրավերների հասցեագրումը: Մենք կնպաստենք կլիմայի փոփոխության դեմ պայքարին՝ ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման, էներգաարդյունավետության բարձրացման, մաքուր էներգիայի աղբյուրների և «կանաչ» տեխնոլոգիաների գործածմանն անցնելու միջոցով՝ միաժամանակ ապահովելով ռազմական արդյունավետությունն ու զսպման և պաշտպանության հուսալի կարգավիճակը:

## Դաշինքի հետագա հաջողության ապահովում

47. ՆԱՏՕ-ում ներդրում անելը եվրոպական և հյուսիսամերիկյան դաշնակից-պետությունների միջև ամուր կապն ապահովելու լավագույն միջոցն է՝ միաժամանակ նպաստելով համաշխարհային խաղաղությանը և կայունությանը: Մենք կշարունակենք ամրապնդել մեր քաղաքական միությունն ու միասնությունը, ընդլայնել և խորացնել խորհրդակցությունները՝ մեր անվտանգությանն առնչվող բոլոր հարցերին արձագանքելու համար: Մենք պարտավորվում ենք ակտիվացնել խորհրդակցությունները, երբ որևէ դաշնակից-պետության անվտանգությունն ու կայունությունը սպառնալիքի տակ են, կամ երբ մեր հիմնարար արժեքներին և սկզբունքներին վտանգ է սպառնում:
48. Մենք հավասարապես կկիսենք մեր պաշտպանության ու անվտանգության պարտականությունները և ռիսկերը: Մենք կապահովենք բոլոր անհրաժեշտ ռեսուրսները, ենթակառուցվածքները, կարողություններն ու ուժերը՝ հիմնական նպատակների լիարժեք իրականացման և որոշումների կայացման համար: Մենք կերաշխավորենք, որ դաշնակից-երկրները լիարժեք իրականացնեն պաշտպանական ներդրումների գծով հանձնառությունները՝ ապահովելով անհրաժեշտ կարողությունների ամբողջ շրջանակը: Մենք կհենվենք ձեռք բերված առաջընթացի վրա՝ երաշխավորելու, որ ազգային պաշտպանական ծախսերի և ՆԱՏՕ-ի ընդհանուր ֆինանսավորման ավելացումը համաչափ լինի առավել վիճարկվող անվտանգային համակարգի մարտահրավերներին:
49. ՆԱՏՕ-ն անփոխարինելի է եվրատլանտյան անվտանգության համար: Այն երաշխավորում է մեր խաղաղությունը, ազատությունն ու բարգավաճումը: Որպես դաշնակից-պետություններ՝ կշարունակենք միասնական լինել պաշտպանելու մեր անվտանգությունը, արժեքներն ու ժողովրդավարական կենսակերպը:



[www.nato.int/strategic-concept/](http://www.nato.int/strategic-concept/)  
**#StrategicConcept**